Արձանագրություն N 3

Նորք-Մարաշ վարչական շրջանում հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/42» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.05.2020թ.

Ժամը՝ 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Երկանյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հարությունյան /գնահատող/, Ա. Կիրազյան /գնահատող/
Գ. Հակոբյան /բացող/, Մ. Թերզյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/42» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանության մասին

(Թ. Երկանյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն իր հայտում առկա անհամապատասխանության շտկման մասով ներկայացրել է փաստաթղթեր, այդ թվում քաղվածք ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից, համաձայն որի որ ընկերության տնօրեն է հանդիսանում Սուսաննա Հայրապետյանը և ոչ Ա. Ստեփանյանը, ինչպես նշված էր մասնակցի ներկայացրած բոլոր փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում:

Հաշվի առնելով, որ ներկայացրած փաստաթղթերից պարզվել է մասնակցի կողմից ի սկզբանե ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել հրավերի պահանջներին, ընկերության տնօրենի տվյալները սխալ են նշված եղել, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի հայտը մերժել՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Թ. Երկանյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ	Անբավարար
ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԲՄԾՁԲ-20/42 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Թ. Երկանյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ԵՔ-ԲՄԾՁԲ-20/42 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Օրենսդրությամբ սահմանված կարգով անգործության ավարտից հետո «ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ին կներկայացվի **Նորք-Մարաշ վարչական շրջանում հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայությունների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Սույն արձանագրության կետերի վերաբերյալ համաձայնությունը գնահատող հանձնաժողովը հաստատել է էլեկտրոնային փոստի միջոցով:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Թ. Երկանյան

Անդամներ՝ ---------- Հ. Հարությունյան

---------- Ա. Կիրազյան

---------- Գ. Հակոբյան

---------- Մ. Թերզյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան